ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԶԵԿՈՒՅԱԳՐԵՐԸ 1914 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻՆ ԿԱՐՍԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան (ռուս-թուրքական) ռազմաճակատում ռուսական բանակն առաջին օրերին ունեցավ ժամանակավոր անհաջողություններ: Վերջինիս նոյեմբեր-դեկտեմբերյան նահանջներն Ատրպատականից ու Արևմտյան Հայաստանից տեղի քրիստոնյա բնակչության շրջանում մեծ խուճապ առաջացրեց: Տասնյակ հազարավոր մարդիկ (հայեր, ասորիներ), ստիպված թողնելով իրենց բնակավայրերը, շարժվեցին դեպի Արևելյան Հայաստան ու Այսրկովկաս[1]: Գաղթականների թիվը հասնում էր շուրջ 60.000-ի[2]: Ճանապարհին մուսուլմանների կողմից ենթարկվելով անասելի հալածանքների ու կողոպուտի՝ նրանք հայտնվեցին անմխիթար վիճակում: Պատերազմական գործողությունների հետևանքով Կարսի մարզում զգալի թվով գաղթականներ էին հավաքվել ինչպես Արևմտյան Հայաստանից[3], այնպես էլ՝ Պարսկաստանի հյուսիսային երկրամասերից:

Առաջին համաշխարհային պատերազմն էապես ազդել է Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության (այսուհետև՝ ԿՀԲԸ) վարչության գործունեության վրա, որը վերակառուցվում է՝ պատերազմի պահանջներին համապատասխան:

Ստորև հրապարակվող փաստաթղթերը վերաբերում են ԿՀԲԸ Կարսի մասնաճյուղի և ԿՀԲԸ-ին կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի (այսուհետև՝ ՀԿԿ) լիազորների՝ գաղթականներին ցուցաբերած օգնությանը, նրանց ցուցակագրմանը և կրած վնասներին:

Փաստաթղթերը պահվում են Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) և տպագրվում են առաջին անգամ: Կատարվել են ուղղագրական և կետադրական որոշ շտկումներ: Բոլոր ընդգծումները փաստաթղթինն են: Մեր միջամտություններն արվել են ուղղանկյուն փակագծերով:

---

[1] *Ա. Ս. Հայրապետյան. Առաջին աշխարհամարտը և Ալեքսանդրապոլի գաւառ հաստատուած գաղթականութեան թուաքանակը.– «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հ. ԼԵ, Պէյրութ, 2015, էջ 250:*

[2] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 21:*

[3] *Նույն տեղում, թ. 12:*

ՆԻՆԵՏԱ ԱԴԱՄՅԱՆ

№ 1

ԿՀԲԸ-Ի ԿԱՐՍԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ Զ. ՋԱՄԲԱԶՅԱՆԻ՝ ԽՈՐՀՐԴԻՆ ՈՒՂՂԱԾ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

12 նոյեմբերի 1914 թ.
Կարս

Ստանալով խորհրդիդ պ[արոն] Նախագահի[4] *հեռագիրը ամսիս 5-ին, Վարչութիւնն արտակարգ նիստում յանձնարարեց ինձ գնալ Սարիղամիշ և այնտեղ ըստ հնարաւորութեան պարզել գաղթականների թիւն ու նրանց կարիքը և կազմակերպել տեղական մարմին այդ խնդրով զբաղուելու: Հետևեալ օրը դուրս գալով Կարսից, ես տեղեկացրի այդ մասին խորհրդիդ հեռագրով: Ամսիս 7-ին առաւօտեան հասնելով Սարիղամիշ, որոշեցի ցուցակագրել Սարիղամիշում եղած բոլոր գաղթականներին, որոնք ներկայ պատերազմի արհաւիրքներից փախել-ապաստանել են այդտեղ: Այս աշխատանքն ինձ առիթ տուեց շփուելու նորեկ գաղթականների հետ և անմիջական ու ճշգրիտ տպաւորութիւններ ստանալու այս աղետից: Միևնոյն ժամանակ նոյն գաղթականներից ես ստացայ անհրաժեշտ տեղեկութիւններ բոլոր գաղթողների մասին, այլ և այն պայմանների մասին, որոնց մեջ կատարուել է գաղթը:*

Գաղթի սկիզբը դրել է Էգիպատ [Էգեպատ] գիւղը: *Հոկտեմբերի 25–26-ին այդ գիւղի սահմաններում տաք կռիւ է տեղի ունեցել երկու բանակի միջև,* և գիւղի եկեղեցին ու բնակարաններից մի քանիսը *վնասուել են ռմբակոծութիւնից: Պատերազմի սարսափներից խոյս տալու նպատակով էգիպատցիք թողնում են տուն-տեղ և շտապով փախչում են մօտակայ Քէօփրու-քէօյ [Քյոփրի քյոյ, Կամրջագեղ] գիւղը, որպեսզի կռիւը վերջանալուց յետոյ, երբ ռուս զօրքերն աւելի առաջ շարժուեն, իրենք վերադառնան իրենց գիւղը: Սակայն հետևեալ օրը գիւղացիք նկատում են, որ ռուսաց սայլաշարը* (SnSջ) *յետ է գալիս: Իսկ երեկոյեան արդեն հաստատւում է ռուսաց զօրքի նահանջը եկած ճանապարհով: Էգիպատցիներին միանում են քէօփրու-քէօյցիք: Հետզհետե սրանց օրինակին հետևում են նաև շրջանի միւս հայաբնակ գիւղերը: Իրենց փախուստը գաղթականները բացատրում են*

[4] *Սամսոն Ստեփանի Հարությունյան (1875–1941) – իրավաբան, հասարակական-քաղաքական գործիչ, ԿՀԲԸ-ի նախագահ, Հայոց ազգային բյուրոյի անդամ: 1914–1916 թթ. ակտիվ մասնակցություն է ունեցել հայ կամավորական շարժմանը: Հայ ժողովրդական կուսակցության փոխնախագահ: 1918–1919 թթ. ՀՀ արդարադատության նախարար:*

տաճկական զօրքի և համիդեական քրդերի վրեժխնդրութեան երկիւղով: Սրանք տեղեակ էին այն խանդավառ ընդունելութեան, որ ցոյց էին տուել հայերը ռուս բանակին: Իսկ երբ ռուսներն ստիպուած էին նահանջել, այդ շրջանի հայերն ուրիշ ելք չունեին պետք է գաղթեին:

Գաղթել են համարիա ամբողջովին հետևեալ գիւղերի բնակիչները.

1.	*Էգիպատ*	*130*	*տուն*	*սրան ցից*	*Սարի դամի 2*	*կան*	*13 տ[ուն]*	*94 հ[ոգի]*
2.	*Քէօփրու-քէօյ*	*120*	*"*	*"*	*"*	*"*	*10 „*	*74 „*
3.	*Կրտաբաս [Կռտապազ]*	*60*	*"*	*"*	*"*	*"*	*22 „*	*169 „*
4.	*Եաղան [Եղան]*	*195*	*"*	*"*	*"*	*"*	*54 „*	*424 „*
5.	*Հարսնեքար*	*40*	*"*	*"*	*"*	*"*	*14 „*	*104 „*
6.	*Իշխու [Իշխան]*	*132*	*"*	*"*	*"*	*"*	*66 „*	*557 „*
7.	*Թէօտէ վերան [Թոդեվերան]*	*30*	*"*	*"*	*"*	*"*	*8 „*	*61 „*
8.	*Գոմաձոր*	*100*	*"*	*"*	*"*	*"*	*21 „*	*192 „*
9.	*Իւզ վերան [Յուզվերան]*	*100*	*"*	*"*	*"*	*"*	*2 „*	*17 „*
10.	*Ծանծաղ*	*30*	*"*	*"*	*"*	*"*	*3 „*	*25 „*
Դալի-բաբա (թրքաբնակ) [Դելի Բաբա]							*1 „*	*8 „*
Խորասան (խառը)							*6 „*	*39 „*

Ընդամենը տասն հայաբնակ գիւղերից գաղթել է 937 ընտանիք: Սարիդամիշում են ցուցակներով հայ 220 ընտանիք, ընդամենը 1844 հոգի: Իւրաքանչիւր ընտանիքի միջին թւով գալիս է 8.4 հոգի, իսկ բոլոր գաղթողների թիւը աւելի քան 7500:

Բացի այդ գաղթականներն ինձ տւին հետևեալ տեղեկութիւնները, որոնք կարօտ են ստուգութեան:

Թորդան *և* Հերթն *(քուրդ և հայ) գիւղերից փախել են հայ տղամարդիկ, թողնելով կանանց և երեխաներին:*

Թաւոնց *[Գեղվանք] գիւղում (թիւրք, քուրդ և հայ) դաւանափոխ են եղել 30 տուն հայեր:*

Խաշլու *[Խաչլու] (թիւրք և հայ) գիւղից անյայտացել են 25 հայեր: Իսկ Խէրսէվէրան [Խոսրովերան] գիւղի հայերին Ղատջալազի քրդերը տարել են պաշտպանելու, և նրանց վիճակն այժմ յատնի չէ:*

Վերոյիշիալ տասն հայաբնակ գիւղերում եղել են նաև գիւղում մնացողներ 5՝8՝10 հոգի, դրանց դրութիւնն ևս անյայտ է:

Նոյն գիւղերից թիւրք զօրքի կարիքների համար տարել են ուլամ – սայլւոր սայլով ու լծկանով,– սրանց դրութիւնն ևս անյայտ է:

Գաղթող գիւղերից մի քանիսը, այն է՝ Էգիպատ, Իշխու և Հարսնեքար, դուրս են եկել յանկարծակի և չեն կարողացել վերցնել իրենց հետ անհրաժեշտ իրեր և անասուններ: Իսկ միւս գիւղացիք հնարաւորութիւն են ունեցել սայլ լծել և քոչել, քշել են նաև անասուններին:

Ինչպես երևում է վերոյիշեալ ցուցակից, Սարիղամիշ[ում] ապաստանել են ընդամենը 220 ընտանիք[ներ], միւսները ցրուել են ռուսական Բասենի[5] և Թախտի շրջանի գիւղերը, մի քանի ընտանիքներ էլ ապաստանել են ճանապարհի վրայ գտնուող տնակներում:

Գաղթականներից շատերը թե՛ Սարիղամիշում և թե՛ այլ գիւղերում ապաստան են գտել իրենց ազգականների կամ երկրացիների մօտներում[6]: Մի մասն էլ առ ժամանակ տեղաւորուած է մասնաւոր տներում շատերին 3–5 օր ժամանակ է տրուած դուրս գալու և հենց Սարիղամիշում շատերն անյարմար դրութեան մէջ են: Միջոց չունեն տուն վարձելու, վստահ չեն, թե գիւղերում տեղ կտան, որ քոչեն գիւղերը:

Ամսիս 9-ին առաւօտեան ինձ մօտ եկան մի խումբ գաղթականներ Իշխուի ծխական քահանայի գլխաւորութեամբ և խնդրեցին միջնորդել ուր հարկն է, որպեսզի իրենց մէջից ընտրուի մարդկանց թոյլ տրւի գնալ գիւղերը՝ տեղեկանալու իրենց տան ու տեղի որպիսութեանը: Նրանց կողմից այսպիսի խնդրով ես դիմեցի կորպուսնի կոմինդանտ[6] իշխ[ան] Յուլիկիձէին, իշխանը յայտնեց, որ այժմ պատերազմական օրենքներով անհնարին է այդ:

Նոյն օրն ինձ դիմեց մի ուրիշ խումբ, խնդրելով շրջանի մեծաւորից կարգադրութիւն՝ իրենց այդ շրջանի գիւղերը տեղաւորելու: Այս խնդրով ես դիմեցի շրջանապետ (Начальник Соганлугского участка)[7] *պ[արոն] Գերարդիին: Պարոնը խոստացաւ իր աջակցությունը:*

Բոլոր գաղթականների անկեղծ փափագն է շուտով վերադառնալ երկիր և տեր լինել իրենց տան ու տեղին: *Մեր ընկերութեան ամենաէական աջակցութիւնը գաղթականներին այն կլինի, որ [հ]արգոյ խորհուրդդ յաջողեցնի այդ առաջին հնարաւորութեան դեպքում: «Ընկերութիւնը մեզ փրկած կլինի«,– ասում էին գաղթականները: Կարծիք կայ, որ այդ հնարաւոր է, երբ ռուս զօրքերն հաստատուեն Հասան-կալէում [Հասան կալա]: Բոլոր յիշեալ գիւղերը գտնուում են Հասան-կալէից* այս կողմ:

---

[5] *1878 թ. Բեռլինի պայմանագրով Ռուսաստանն Օսմանյան կայսրությանը վերադարձրեց 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում գրաված Ալաշկերտի հովիտը, բացի Բասենի 40 գյուղերից: Դրանցից կազմվում է վարչական նոր միավոր՝ Կարսի մարզի Կաղզվանի օկրուգի Խորասանի տեղամասը, որը նաև կոչվում է «Ռուսական Բասեն»: Օսմանյան տիրապետության տակ մնում են Բասենի 98 գյուղ, որոնք անվանում են «Թուրքական կամ Տաճկական Բասեն»:*

[6] *Կորպուսային պարետ:*

[7] *Սողանլուղ տեղամասի պետ:*

Իմ պարտականությունները կատարելիս բնականաբար հետաքրքրված էի մի կարևոր խնդրով – ինչ չափով գաղթականները կարող են հասարակության նիւթական օժանդակությանը. շնորհիւ այն բանի, որ ես ցուցակագրության առիթով այցելել եմ բոլոր գաղթականներին իրենց ժամանակաւոր օթևաններում. այդ խնդրի վերաբերմամբ եկել եմ մի որոշ եզրակացության: Ինձ շատ յաճախ դիմում էին գաղթականներն այդ մտքով: Սակայն ես նրանց միշտ զգուշացրել եմ, որ ներկայ հանգամանքների մեջ նրանք յույս չունենան դրսի օգնության վրայ և ամեն կերպ աշխատեն յարմարուել նոր պայմաններին և հոգալ իրենց կարիքները թե՛ գիւղերում և թե՛ Սարիղամիշում: Այս միտքը ներշնչելով հանդերձ բոլոր գաղթականներին, այցելությունների ժամանակ տեսնում էի ընտանիքներ, որոնց անհրաժեշտ է անմիջական օգնություն: Այսպես, կան ընտանիքներ, որոնց աշխատող անդամների վիճակն անորոշ է, որոնք ծերացած են, տկար, կամ արատաւոր (կույր, հաշմանդամ և այլն), և կամ որոնց միակ աշխատաւոր անդամը մեծ ընտանիքով ծանրաբեռնուած է: Կան ընտանիքներ, որոնք յանկարծակի դուրս գալով ոչինչ չեն վերցրել և այժմ կարոտության մեջ են: Միանաւագ օժանդակություն անհրաժեշտ կլինի նաև այն ընտանիքներին, որոնք պետք է քոչեն գիւղերը:

Արդեն շեշտել եմ, որ գլխաւոր խնդիրը գաղթականներին շուտով իրենց տեղը հաստատելն է, որի համար պետք է ամեն ջանք գործ դնել: Եթե այդ շուտով յաջողուի, նրանց օժանդակելու գործը ընդարձակ չափերի չի հասել: Սակայն եթե այդ անհնարին լինի, այն ժամանակ նրանց օժանդակությունը շուտով կդառնայ մի լուրջ, սիստեմատիկ գործ, որ կպահանջէ մեծ զոհողություններ թե՛ ընկերությունից և թե՛ հասարակությունից:

Գաղթականության հետ կապված զանազան խնդիրների կարգաւորման համար անհրաժեշտ էր Սարիղամիշում ունենալ մի մարմին, որ միևնոյն ժամանակ նպաստեր նրանցից կարիքաւորներին: Այս խնդրի առթիւ ես խորհրդակցեցի Սարիղամիշում մի քանի ձեռնհաս անձանց հետ, իմ առաջարկությամբ ամսիս 9-ին կայացաւ հասարակական ժողով, որ ընտրեց հինգ հոգուց բաղկացած մի մարմին: Նոյն օրը երեկոյեան իմ հրաւերով կայացաւ մասնաժողովի առաջին նիստը, որտեղ կայացաւ պաշտոնատար անձանց ընտրությունը: Մասնաժողովի կազմն է – նախագահ՝ Տիգրան Քալանթարեան (անասնաբոյժ), գանձապահ՝ Տաճատ քահանայ Տէր Վարդանեան, քարտուղար՝ Վահան Գասպարեան (տեսուչ պետական դպրոցի), անդամներ – Մուշեղ Մովսեսեան (վաճառական) և Աւետիս Բանդուրեան (լուսանկարիչ): Սրանց աջակցելու և ի հարկին փոխարինելու համար ժողովն ընտրեց 4 անձնափոխանորդ – Սարգիս Ղանամալեան, Վաղարշակ Քելմեշեան, Սարգիս Խանամիրեան և Յակոբ Սարգսեան:

Մասնաժողովի անդամներն հենց սկզբից ինձ յայտարարեցին, որ նրանք Սարիղամիշի յուսով ոչինչ չեն կարող անել և սպասում են մեր ընկերության և հայ հասարակության աջակցությանը: Ես կարդացի խորհրդիդ պ[արոն] Նախագահի հեռագիրը և վստահացրի, որ ընկերությունը ցոյց կտայ իր աջակցությունը: Այնուհետև տեղի ունեցաւ կարծիքների փոխանակության այդ մարմնի ֆունկցիաների, գործավարության և յարաբերո-

ութեան մասին (խորհրդիդ, Կարսի վարչութեան և այլ հաստատութիւնների հետ): Այդ խնդիրների վերջնական ձևակերպութիւնը թողնուեց խորհրդիդ հրահանգութեանը:

Ժողովի ընթացքում շփուելով նորընտիր մարմնի անդամների հետ, ես եզրակացրի, որ ընտրութիւնն յաջող է. իմ այս տպաւորութիւնը չթաքցրի ներկայ եղողներից և յաջողութիւն ցանկանալով նրանց, նոյն գիշերը մեկնեցի Սարիղամիշից՝ տալով իմ երկրորդ հեռագիրը խորհրդիդ անունով:

Նոյեմբերի 11-ին կայացաւ մեր ընկերութեան Կարսի վարչութեան նիստը. վարչութիւնը լսելով իմ զեկուցումը, որոշեց. 1) իր միջոցներից 200 ռուբլի դնել Սարիղամիշի մասնաժողովի տրամադրութեան տակ, որից 100 ր[ուբլի] անվերադարձ և 100 ր[ուբլի] փոխարինաբար՝ խորհրդիցդ ստանալու պայմանով: 2) Նոյն զեկուցումը ներկայացնել խորհրդիդ և նորեն վեհափառութեան դիւանին:

Վարչութեան մեջ հարց բարձրացաւ նոյն զեկուցումն ուղարկելու նաև ընկերութեան ճիւղերին, Բագուի մարդասիրական ընկերութեան և այլ ազգային հաստատութիւնների, սակայն յարմար համարուեց այդ նախաձեռնութիւնը վերապահել խորհրդիդ:

Նոյեմբերի 12-ին նոյն զեկուցումը ներկայացրի տեղական հայկական կոմիտետին: Այդ կոմիտետի անդամներից պ[արոն] Գ[րիգորի] Զամոյեան[8], որ նոր էր վերադարձել ռուստաձկական սահմաններից, տխուր գործերով ներկայացրեց գաղթական ընտանիքների դրութիւնը գլխաւոր ճանապարհի վրայ՝ Սարիղամիշից այն կողմը: Կոմիտեն անհրաժեշտ համարեց, որ անկախ Սարիղամիշի մասնաժողովից, ընկերութիւնն ունենայ այդ շրջանում իր լիազօրը յատկապես գաղթականութեան վերաբերեալ խնդիրներով զբաղվելու: *Միևնոյն ժամանակ որոշեց խնդրել խորհրդիդ ընկերութեան ճիւղերի աջակցութեամբ կազմակերպելու օժանդակութեան գործը:*

Վերջացնելով զեկուցումս, ցաւ եմ յայտնում, որ ես հնարաւորութիւն չունեի այցելելու գաղթականներին Թախտի և Բասենի գիւղերում, որով աւելի լրիւ կլիներ իմ տեղեկագիրը նրանց մասին: Սակայն, կարծում եմ, այսքանն ևս բաւական է մի ընդհանուր գաղափար կազմելու համար, այս գաղթի մասին: Հենց այդ էլ եղել է վարչութեան նպատակը, որ ինձ վրայ դրեց այս պարտականութիւնը:

---

[8] *Գրիգորի Սերգեյի Զամոն (Գրիգոր Սուրենի Զամոյան, 1865–1937) – իրավաբան, ՀՅԴ անդամ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ԿՀԲԸ-ն նրան գործուղել է ռուսական զորքի կողմից Արևմտյան Հայաստանի գրավված տարբեր բնակավայրերը՝ հայ բնակչությանն օգնություն ցուցաբերելու համար: 1916 թ. եղել է ԿՀԲԸ-ին կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր: Հայաստանում Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո բնակվել է (կամ աքսորվել) Ալմա Աթայում: 1934 թ. դեկտեմբերի 20-ին ձերբակալվել է և 1935 թ. մարտի 9-ին ԽՍՀՄ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատին (ՆԳԺԿ) կից Հատուկ խորհրդակցության կողմից դատապարտվել է 5 տարվա բանտարկության: 1937 թ. հոկտեմբերի 9-ին ՆԳԺԿ Հատուկ եռյակը դատապարտել է գնդակահարության, որն ի կատար է ածվել նոյեմբերի 3-ին: Հետմահու արդարացվել է 1989 թ. հուլիսի 8-ին:*

Զ[ոհրաբ] Զամբազեանց

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 12–15: Բնագիր: Ձեռագիր:

№ 2

ԿՀԲԸ-Ի ԽՈՐՀՐԴԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԼԻԱԶՈՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՐԱՖՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ՝ ՍԱՐԻՂԱՄԻՇՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՑՈՒՅՑԱԲԵՐՎՈՂ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

23 նոյեմբերի 1914 թ.
Սարիղամիշ

Նոյեմբերի 20-ին հասայ Ղարս: Երեկոյան ներկայ եղայ Բարեգործական ճիւղի և ազգային Բիւրոյի[9] *վարչութեանց անդամների խառն ժողովին, որտեղ տեղեկացայ, որ ոչ Ղարսում և ոչ Կաղզւանում գաղթականներ չկան: Գաղթականները* կենդրոնացած են Բասենի շրջանում, որը ունի 11 հայ գիւղեր, Սարիղամիշում և Թախտի շրջանում, *որը* ունի 10 գիւղ*: Ղարսի Բարեգործական և ազգային Բիւրոյի ճիւղերի անդամները տեղեկութիւն ունեն միայն Սարիղամիշում ապրող գաղթականների դրութեան մասին, իսկ շրջաններում ապրողների մասին ոչ մի տեղեկութիւն չունեին, որովհետև ոչ ոք չէր շրջել գիւղերը:* Այդ ժողովում կայացաւ գաղթականներին օգնող մասնաժողովի անդամների ընտրութիւնը: *Ընտրեցին Բարեգործական ճիւղի վարչութեան բոլոր անդամները և ազգային Բիւրոյի ճիւղի անդամներից՝ Շէխեանց Գէորգ, Սեդրակ Էլբակեանց, Արամ Տէր-Ղևոնդեանց և Տէր Համազասպ ք[ա]հ[ա]նայ Ղարագէօզեանց: Նոյեմբերի 21-ին մասնաժողովի հետ ունեցայ նիստ, որոշելու՝ ինչպես կազմակերպել օգնութեան գործը: Այդ ժողովին ներկայ էին՝ Սարիղամիշի մասնաժողովի նախագահ պ[ա]ր[ո]ն Տիգրան Քալանթարը և Պետական դումայի անդամ Չխենկելին*[10]*, որը հենց այդ օրը վերադարձել էր Սարի-*

---

[9] *Ազգային բյուրո կամ Թիֆլիսի ազգային կենտրոնական բյուրո (1912-ի հոկտեմբեր 1917-ի հոկտեմբեր) – ստեղծվել է Ռուսական կայսրության հայաշատ կենտրոնների ներկայացուցիչների համագումար–խորհրդակցությունում (1912): Նպատակն էր օգտվել 1912–1913 թվականների բալկանյան պատերազմների հետևանքով ստեղծված իրադրությունից և հասնել Հայկական հարցի լուծմանը: Ազգային բյուրոյի կազմում էին հայ ազգային գրեթե բոլոր կուսակցությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ազգային բյուրոն սկզբում զբաղվում էր Հայկական հարցի քարոզչությամբ, Առային համաշխարհային պատերազմի ժամանակ Կովկասյան ռազմաճակատի համար կազմակերպում էր հայկական կամավորական ջոկատներ: Զբաղվել է նաև արևմտահայ գաղթականներին տեղավորելու և պարենամթերքով ապահովելու հարցերով:*

[10] *Չխենկելի Ակակի Իվանի (1874–1959) – վրաց քաղաքական գործիչ, իրավաբան, IV Պետական դումայի անդամ, սոցիալ-դեմոկրատ, մենշևիկ: Փետերվարյան հեղափոխությունից հետո եղել է Օզակում-ի անդամ: 1918 թ. մայիսի 26 (8 հունիսի) մինչև 1918 թ. նոյեմբեր Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության արտաքին գործերի նախարար:*

դամիշից և ցանկութիւն էր յատնել իր տպաւորութիւնները գաղթականների դրութեան մասին հաղորդել մասնաժողովի անդամներին:

Պ[ա]ր[ո]ն Քալանթարի և Չխենկելու զեկուցումից, հիմնուած ընդհանուր տպաւորութիւնների վերայ, *երևաց որ գաղթականների դրութիւնը միանգամայն աննախանձելի է: Նորանից* շատ շատերը մեծ կարիք ունեն՝ հացի, շորի, տեղաշորի և բժշկական օգնութեան: *Այդ նիստում որոշուել [է]՝* I. կազմակերպել, ինչպես պետք է յարատև օգնութեան գործը, *իսկ մինչև այդ ցոյց տալ օգնութիւն հացով և շորով: II.* Խնդրել մեծարգոյ խորհրդիդ ուղարկել երկու, իսկ անհնարին դեպքում մեկ ֆելդշեր[11], որպեսզի բազմաթիւ հիւանդներին հնարաւորութիւն լինի բժշկական օգնութիւն հասցնել: *Մինչև այդ ֆելդշերի գալը, ժողովը որոշեց՝ յանձնարարել պ[ա]ր[ո]ն Չխենկելուն միջնորդել նահանգապետի առաջ ուժեղացնելու բժշկական նաղզորը[12] Սարիղամիշում: Պետք է՝ յայտնեմ մեծարգոյ խորհրդիդ, որ այդ միջնորդութիւնից որևէ բան սպասել դժվար է, որովհետև եղած ֆելդշերների թիւը այնքան աննշան է, որ հազիւ կարողանում են բաւարարութիւն տալ իրենց հիւանդներին, ուստի առաջարկում եմ շուտով ուղարկել մեկ ֆելդշեր մեդիկամենտներով[13], որպեսզի հիւանդութիւնները համաճարակի գործ չստանան, հակառակ դեպքում հիւանդութիւնները համաճարակի գործ ստանան կառաւարութիւնը վախելով զօրքի վարագումից նոցա բոլորին կհեռացնի սահմանի գիւղերից:* III. Ժողովը հարմար գտաւ գաղթականների օգնութեան գործը կենդրոնացնել Սարիղամիշում, *իբրև գաղթականների կենտրոն: Սարիղամիշի վարչութիւն պետք է յարաբերութեան մեջ լինի Ղարսի և Բիթլիզի վարչութիւնների հետ:* IV. Ի նկատի ունենալով ապրուստի սոսկալի թանգութիւնը, բնակարանների պակասութիւնը և գարնիզոնի նաչալնիկի տրամադրութիւն, *որը այնքան էլ վստահորեն չի վերաբերւում դեպի գաղթականները, որոշեց տեղափոխել* Սարիղամիշի գաղթականներին Բասենի և Թախտի շրջաններում *[գրաւած] հայկական գիւղերը: Խորհրդիդ ուղարկած 1.000 ր[ուբլուց] մասնաժողովը յանձնեց ինձ 800 ր[ուբլի] որպեսզի Սարիղամիշի վարչութեան անդամների հետ միասին, մինչև վերջնականապես օգնութեան գործը կազմակերպելը, բաւարարութիւն տալ գոնե մի քանի օրով գաղթականների անհրաժեշտ և անմիջական կարիքներին:*

Նիստից յետոյ՝ նոյն գիշերը ժամը 1-ին, գնացքով ուղևորվեցի Սարիղամիշ՝ վերջացրած համարելով Ղարսում անելիքներս: Սարիղամիշում ներկայացայ Սողանլուղսկի նաչալնիկին, որը խոստացաւ հնարաւոր աջակցութիւն ցոյց տալ գաղթականներին տեղաւորելու և օգնութիւն կազմակերպելու գործի մեջ: Շրջեցի Սարիղամիշի գաղթականների տները, համոզուեցի իսկապես, որ կարիքը չափազանց մեծ է: Նախ և առաջ բնակարանների մեծ պակասութիւն է զգացւում: Բոլոր 220 գաղթականները, բաղկացած 1800 հոգուց, տեղաւորուել են հայկական զանազան ընտանիքներում և մի երեք բոլորովին դատարկ

---

[11] *Բուժակ:*

[12] *Հսկողություն:*

[13] *Դեղորայքներով:*

բնակարաններում: *Տեղի չափազանց մեծ նեղուածքութիւն է զգացւում, այսպես օրինակ՝* 5 քայլ երկարութիւն և 5 քայլ լայնութիւն ունեցող սենակում ապրում են 24 հոգի: *Այդպիսի կուտակումից և ցրտից շատ շատերը հիւանդացել և մեռել են:* Վախճանուածների թիւը մինչև օրս *միայն Սարիղամիշում հասնում է* 15 հոգու: Քիչ չէ և հիւանդների թիւը: *Կասկածելով համաճարակից երկու հայ ծանոթ զինուորական բժիշկների հետ միասին, որոնք պատերազմի պատճառով առ այժմ գործում էին Սարիղամիշում,* շրջեցի գաղթականների տները ստուգելու կասկածանքս: Բժիշկները ժխտեցին համաճարակի գոյութիւնը, միայն կարծիք յայտնեցին, որ այդպիսի կուտակումից և սովից *և ցրտից շատ հեշտութեամբ կարող են հիւանդութիւնները համաճարակի գործ ստանալ: Հարց ու փորձից տեղեկացայ, որ բոլոր գաղթականների թիւը* հասնում է 1100 տնի՝ բաղկացած 10.000 հոգուց: Ամենախոշոր տոկոսը զուրկ չէ աշխատաւոր ձեռքերից, *միայն աշխատանք գտնել շատ և շատ դժվար է:* Այդ գաղթականներից շատ չնչին տոկոսն է կարողացել գաղթել երկու, երեք եզով կամ մեկ-երկու ձիով, նոյն իսկ շատ շատերը զուրկ են տեղաշորերից: *Գաղթականներին այցելելիս բոլորի մեջ աշխատում էի մտցնել այն համոզումը, որ զգալի օգնութիւն զանազան տեղերից չպետք է սպասել:*

Գաղթականների թիւը այնքան է, որ եթե միայն 10%-ին օգնելու լինենք օրական 10 կոպեկի հացով, ամսական կհատկացւի 3000 ր[ուբլի]: *Հրաւիրեցի ժողովի պ[ա]ր[ո]ն Զոհրաբ Զամբազեանի կազմած մասնաժողովի անդամներին, որտեղ ներկայ էին Ղարսի ճիւղի կողմից ուղարկւած՝ պ[ա]ր[ո]ն* Լիբարիտ Ալլահվերդեան և Կոստանդին Գիլնազարեանց, *որոնք եկել են աջակցելու:* Ժողովում որոշեցինք անցնել [վաղվանից] հետևեալ գործնական քայլերի՝ I. վաղը վերջացնելով Սարիղամիշում գտնվող գաղթականների ցուցակագրումը՝ կազմել ամենակարիքաւորների ցուցակը և տալ օրական 10 կոպեկ ամեն մի անդամի, եթե ընտանիքը երեք անդամից աւելի է, այն ժամանակ իւրաքանչիւր աւելի անդամին տալ 5-ական կոպեկ: *Այդ օրինակ օգնութիւնը տևելու է 8–10 օր, մինչև կցուցակագրւեն գիւղերում ապրող գաղթականները և կիմացւեն սահմանի որ գիւղերում հնարաւորութիւն կլինի տեղաւորել նոցա:* II. Ամբողջ շրջանը բաժանելով չորս բայոնի[14]՝ վաղւանից 4 հոգի ճանապարհելու ենք ցուցակագրելու գիւղերում *ապրող գաղթականներին, ծանոթանալու նրանց դրութեան հետ և տեղեկանալու սահմանի մոտիկ որ հայկական գիւղերում հնարաւորութիւն կայ տեղաւորելու Սարիղամիշում ապրող գաղթականներին:* III. Որոշեցինք գիւղերը շրջագայելիս միաժամանակ տալ ամենակարիքաւորներին օգնութիւն՝ ալիւրով 30-ական փուտ[15] ամսական ամեն մի հոգուն: IV. Որոշւեց նմանապես Սարիղամիշում ապրող մի քանի ընտանիքներին, *որոնք բնակւում են առանձին բնակարաններում և բոլորովին վառելիքից զուրկ են,* յատկացնել 20 ր[ուբլի] փայտի համար, մինչև նոցա գիւղեր փոխադրելը: V. Որոշեցինք կազմել առ այժմս Սարիղամիշում գտնւող աշխատաւոր ձեռքերի ցուցակ *և վաղն և ետ յանձնել այն ցուցակը մասնաժողո-*

[14] *Շրջան:*

[15] *1 փութ = 16,3 կգ:*

վին նախագահ պ[ա]ր[ո]ն Տիգրան Քալանթարին, *որ պ[ա]ր[ո]ն Դոլուխանեանի հետ միասին աշխատելու են յաջողեցնելու աշխատանք գտնելու գործը նոր շինող խճուղի ճանապարհների վերայ:*

Որովհետև այստեղ գոյութիւն չունի Բարեգործական ընկերութեան ճիւղ, իսկ ներկայ րոպեում հնարաւորութիւն չկայ կազմակերպելու, ուստի ընտրուած մասնաժողովի անդամները խնդրում են ուղարկել գաղթականներին նպաստող կոմիտեի կամ Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութեան անունից մի վկայական այն իմաստով, որ այստեղի մասնաժողովը *ճանաչում է կոմիտեի կամ Բարեգործական ընկերութեան կողմից, վարելու գաղթականներին օգնելու գործը: Վարչութեան անդամների անունները արդեն մեծարգոյ խորհրդին յայտնի է պ[ա]ր[ո]ն Զոհրաբ Զամբազեանի զեկուցումից: Վերջացնելով համառոտ զեկուցումն, պատիւ ունեմ տեղեկացնելու Մեծարգոյ խորհրդիդ, որ ամենամանրամասն զեկուցում ճշգրիտ տուեալներով կներկայացնեմ, երբ կվերջացնենք ամբողջապես ցուցակագրերը և գործի կազմակերպութիւնը: Առ այժմս միայն այսքանը կարող եմ ասել, որ* կարիքը չափազանց մեծ է և հարկաւոր է մեծ չափով օգնութիւն: *Յուսով եմ 12–14 օրւայ ընթացքում կվերջացնեմ անելիքներս:*

Աղէքսանդր Շարաֆեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 112, թ. 1-2: Բնագիր: Ձեռագիր:

№ 3

ԿՀԲԸ-Ի ԽՈՐՀՐԴԻՆ ՈՒՂՂԱԾ ԼԻԱԶՈՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՐԱՖՅԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ՝ ՍԱՐԻՂԱՄԻՇՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ԿՐԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախընթաց համառօտ զեկուցումովս տեղեկացրել էի մեծարգոյ Խորհրդիդ Կարսում և Սարիղամիշում գաղթականներին նպաստող մարմինների ընտրութեան մասին, միաժամանակ յայտնել էի ի գիտութիւն երեք աջակցող պարոնների՝ Ալլահվերդեանի, Գիւլնազարեանի և Սարգսեանի հետ գիւղերը ճանապարհորդելուս մասին, ցուցակագրելու փախստականներին, որոշելու կարիքի չափը, կորուստը և կազմակերպելու նպաստի գործը բոլոր վայրերում, որտեղ գտնւում են փախստականներ:

Փախուստի պատճառը եղել է ռուսաց զօրքի յետ նահանջումը: Գաղթել են հետևեալ 11 գիւղի բոլոր բնակիչները՝ *Իւզվերան 130 տուն, Եաղան 193 տ[ուն], Գոմաձոր 120 տ[ուն], Քէօփր-քէօյ 120 տ[ուն], Իշխու 132 տ[ուն], Խոդավերան 30 տ[ուն], Հարսնքար 40 տ[ուն], Թէդովերան 38 տ[ուն], Գրդաբազ 60 տ[ուն], Ծանծաղ 50 տ[ուն], Էգիպատ 130 տ[ուն] ընդամենը 1043 տուն: Անդամների թիւը հասնում է՝ արական 3712 հոգի, իգական 4446 հոգու,* ընդամենը 8158 հոգու 360 ծծկերներով. *հետևապես ամեն մի տան վրայ գալիս է միջին թւով 8 անդամ: Արական անդամներից 1712-ը ընդունակ են աշխատելու:*

Այժմ անցնենք ունեցած կորստին կամ աւելի ճիշտ՝ նրա տնտեսական դրությանը Տաճկաստանում, նախքան փախուստը: Վերոյիշեալ 11 գիւղերի բնակիչները ունեցել են լծկան (գոմէշ, եզ) 5765, կթան (կով, մատակ) 4050, ձի և աւանակ 411, մանր անասուններ (հորթ, ոչխար, այծ) 20895, ցորեն, գարի 20037 սմար[16] *(սմար 30 փ[ու]թ), սայլեր 3045: Բացի յիշածներից ամեն մի ընտանիք ունեցել է երկրագործական անհրաժեշտ (երկրագործական) գործիքները հին տիպի, իսկ մօտ 10 % նմանապես և նոր տիպի գութաններ և այլն, մի քանի երկրագործական գործիքներ: Բոլոր ընտանիքներն էլ ապրելիս են եղել իրենց սեփական տներում, որոնք ունեցել են գոմ և մարագ: Փախստականների ունեցածների մեջ պակաս տեղ չեն բռնում և տեղաշորերը, ամեն մի ընտանիք ունեցել է ոչ թե միայն իր ընտանիքին անհրաժեշտ տեղաշորերը, այլև մեկ կամ մի քանի ձեռք, նայած հարստութեանը՝ տեղաշորեր է պահելիս եղել հիւրերի համար: Ուստի տաճկահայ ժողովուրդը հարստութիւնը չափում է ունեցած տեղաշորերի քանակով, ով շատ «ծալք» տեղաշոր ունի, նա աւելի հարուստ է:*

Եթե հաշուենք, որ ամեն մի գոմէշ և եզ արժենալիս է եղել 50 ր[ուբլի], մատակը և կովը՝ 40 ր[ուբլի], ձին և աւանակը՝ 40 ր[ուբլի], մանր անասունները հորթ, ոչխար և այծ՝ 4 ր[ուբլի], ցորեն և գարի՝ փութը 70 կոպ[եկ], սայլը՝ 25 ր[ուբլի], տուն, մարագ, գոմ միասին ամեն մի ընտանիքի միջին թւով՝ 500 ր[ուբլի], գիւղատնտեսական գործիքներ ամեն մի ընտանիքի միջին թւով՝ 15 ր[ուբլի], շորեր և տեղաշորեր ամեն մի ընտանիքի՝ 70 ր[ուբլի] այն ժամանակ փախստականների կորուստը հաւասր կլինի 1.800.000 ռուբ[լու]:

Բացի նիւթական վնասներից ունեցել են և մարդկային զոհեր: Երկրում մնացել են 165 մարդ, որոնք հնարաւորութիւն չեն ունեցել փախչելու և որոնց վիճակը անյայտ է: Փախուստի ժամանակ և յետոյ մահացել են 35 հոգի, հիւանդների թիւը հասնում է 75-ի: Ի դեպս պետք է ասել, որ Իշխուի, Հարսնքարի և Էգիպատի փախստականները չեն կարողացել վերցնել հետները ոչ մի բան և հազիւ հազ կարողացել են ազատել իրենց կեանքը:

Բոլոր փախստականները տեղաւորուել են ռուսաց և տաճկայ Բասենի և Կարսի, Թաղթի շրջանի հետևեալ գիւղերում՝ *I. Խորասանի շրջան կամ ռուսաց Բասենի գիւղերը. 1) Ղարա-կուրտ [Ղարադուրդ] (յունական գ[յուղ]), 2) Ղոշա-քիլիսա [Կոշաքիլիսա], 3) Ծոփերան [Խոփերան], 4) Շաղնան [Շատնան], 5) Ղարափուղար [Ղարափունդար], 6) Գիւլանթափա [Գուհանտապ] (կեսը հայ, կեսը քուրդ), 7) Բաշ-գիւղ [Բաշ], 8) Արմտլի [Արմըտլու], 9) Չիւրուկ [Չուրուք], 10) Խէօշ-Գէալդի [Խոշգյալդի], 11) Չօլախլի [Չոլախլի], 12) Սրաման [Սանամեր]: II. Նոր նուաճած երկրների կամ տաճկ[ական] Բասենի գիւղերը 13) Ղարաքիլիսա (թ[ու]րք[ական] գ[յուղ], որտեղից սկզբում թուրք բնակիչները փախել էին, իսկ այժմս մի մասը վերադարձել է, 14) Տոտի [Դոդի], 15) Ալի-Դժուքրակ [Ալի-Ճագրակ], 16) Ջրասուն [Ջերասուն], 17) Քոթակ [Քոթակ], 18) Դալի-Բաբա, III. Ղարսի Թաղթի շրջանի գիւղերը, 19) Բեռնա, 20) Դօլբանդլու [Դոլբանտ], 21) Բէգլի-Ահմէդ [Բեգլի-Ահմեդ], 22)*

[16] *1 սմար = 16 կգ*

Ղարաքիլիսա, 23) Ալի-Սօֆի [Ալի-Սոֆի] (թ[ու]րք[ական] գիւղ), 24) Եալդուզչում [Յալդուզչի] (թ[ու]րք[ական] գ[յուղ]), 25), Բայբուրդ, 26) Սեօգութլի [Սոգյուտլի], 27) Օրթաղալա [Օրթակալա], 28) Բայդուրու [Բայդարա], 29) Աքսի-Ղազի [Աքսի Ղազի]: Բացի վերոյիշեալ գիւղերից 143 ընտանիք բնակւում է Սարիղամիշում, *որոնց նմանապես որոշած է ուղարկել վերոյիշեալ գիւղերը, գլխաւորապես Բասենի գիւղերը, որովհետև Սարիղամիշում զգացւում է բնակարանների մեծ պակասութիւն և կյանքը չափազանց թանկ է: Մի քանի խօսք նպաստող մարմինների մասին:*

Ղարսում ընտրուած է Բարեգ[ործական] ընկ[երության] վարչութեան բոլոր անդամներից և Ազգային բիւրօյի չորս անդամներից մարմին, որը զբաղուած է փախստականների գործով: *II. Սարիղամիշում ևս ընտրուած է նոյն նպատակով մի մարմին 5 անդամից բաղկացած: III. Արդահանում ևս ընտրուած է մի մարմին ուսուց[իչ] Արտաշես Սարգսեանի և Գէորգ ք[ահանա] Սարգսեանից, որոնց իրաւասութեան տակ են գտնւում հետևեալ գիւղերի փախստականները՝ Արդահանի, Ղարաքիլիսի, Դուրի, Ալի-Դժաքրաքի, Ջրասունի և Դալի-Բաբայի: IV. Բաշ գիւղում ընտրուած է մի մարմին ուսուցիչ Տիգրան Թորոսեանից և մեկ ուրիշից, որոնց իրաւասութեան տակ են գտնւում հետևեալ գիւղերի փախստականները՝ Բաշ գիւղի, Արմտլիի, Չիւրիքի, Խէօշ-գեալդիի, Չօլախլիի, Գիլանթափայի և Ղարափուղարի: V. Շաղնանում մարմնի անդամներ ընտրուած են Տէր-Նիկողաեոս ք[ա]հ[անա]ֆ և Համբարձում Մուրադենաց: VI. Հոփուերանում մարմնի անդամներ են ուսուցիչ Հմայակ Սարգսեան, Գէորգ ք[ահանա] Աբրահամեանց և Յովհ[անես] Գասպարեանց, Ղարսի Թախթի գիւղերում, չունենալով ինտելիգենտ և վստահելի անձնաւորութիւններ, ժամանակաւորապես գործը հանձնուած է տանուտերերին:*

Վերոյիշյալ փախստականների բնակած գիւղերի մօտակայ մալականների Սիլիմ *և յոյների Մասարջուղ գիւղերում տարածուած է* սկարլատինա[17] և դիֆթերիտ համաճարակը: *Այս տեսութիւնից պարզ երևում է, որ կարիքը չափազանց մեծ է և հարկաւոր է լայն չափով օգնութիւն, միայն այդ օգնութիւնը պետք է կազմակերպւի այն ձևով, որ ժողովրդին չանբարոյականացնի և չծուլացնի:*

Անմիջապես մեծ կարիք է զգացւում տեղաշորերի և երեխանց տաք շորերի, *որովհետև մեծ մասը աւելի ճիշտ կլինի ասել համարեա բոլորը զուրկ են այդ իրերից և ներկայիս ցրտերը ևս աւելի պահանջ են դարձնում այդ իրերը: Աչքի առաջ ունենալով* հիւանդների թիւը *և այդ կողմերում բժշկական* օգնութեան չափազանց *աննախանձելի վիճակը, անհրաժեշտ է ունենալ երկու ֆելդշեր մեդիկամենտներով, մեկը* Բասենի շրջանում, *միւսը Ղարսի* Թաղթումն, *մանաւանդ որ արդեն գոյութիւն ունի սկարլատինա և դիֆթերիտ համաճարակը շրջակայ գիւղերում և եթե առաջն չառնուի, կարող է տարածուիլ և փախստականների մեջ:*

[17] *Քութեշ:*

Հարկաւոր են երեք անձնաւորութիւններ – միանգամայն վստահելի և ինտելիգենտ, որոնցից մեկը շրջելու է Թախտի շրջանը, միւսը Բասենի շրջանը, իսկ երրորդը Սարիղամիշի վարչութեանն է օգնելու: Ի դեպս պետք է ասիմ, որ ամբողջ գործը պետք է կենտրոնացնել Սարիղամիշում, որովհետև վերջինը ներկայացնում է իբրև կենտրոնատեղի մնացած բոլոր այն վայրերի, որտեղ բնակւում են փախստականներ:

Որովհետև կը հարկաւորւի տնողական օգնութիւն, ուստի ի նկատի ունենալով այդ և բացի դրանից չանբարոյականացնելու և չծուլացնելու ժողովրդին, անհրաժեշտ է աշխատաւոր ձեռքերին գործի դնել, որպեսզի նոքա կարողանան հայթայթել իրենց և ընտանիքի կարիքները, այդպիսի աշխատաւորների թիւը հասնում է 1712-ի: Կարելի է աշխատեցնել հետևեալ աշխատանքների վերայ. I. նոր նւաճւած երկրներում շինւում են ճանապարհներ, որտեղ պահանջւում են մեծ թւով բանւորներ, հարկաւոր է փախստական աշխատաւոր ձեռքերին տեղաւորել այդտեղ: Այդտեղ աշխատանքները կախւած է կորպուսնի նաչալնիկ[18] Յուլուկիդզէից, որը ներկայումս գտնւում է Թիֆլիսում, հարկաւոր է նրանից պահանջել, որ փախստականներին գործ տայ, հակառակ դեպքում անհրաժեշտ է դիմել աւելի բարձր իշխանութեան: II. պատերազմի պատճառով պահանջւում են մեծ քանակութեամբ աբոզներ, հարկաւոր է լծկան ունեցողներին տալ այդ գործը, իսկ այն լծկան ունեցողները, որոնք սայլեր չունեն, պետք է գնել նրանց համար սայլեր և դնել այդ աշխատանքի, միայն պետք է աշխատել վերցնել այստեղի բարձր իշխանութեան թոյլտւութիւնը, որ ամեն մի պատահող ստրաժնիկ[19] կամ կուլակ իրաւունք չունենայ սայլերը քշել այն կողմը, որտեղ ինքն է ցանկանում և այդպիսով անպարտաճանաչ դուրս բերե գիւղացիներին: Այդպիսի աշխատանքները կունենա կրթիչ նշանակութիւն փախստականների համար և կթեթևացնեն նպաստի քանակը: Որովհետև եթե աչքի առաջ ունենանք, որ մենք նպաստելու լինենք 50 %-ին – 10-ական կոպեկով, այն դեպքում ամսական կհարկաւորւի օրական մօտ 500 ր[ուբլի], ամսական՝ 15.000 ր[ուբլի], միաժամանակ չպետք է մոռանալ, որ նպաստ տալ կհարկաւորւի ամենաքիչը 6 ամիս: Բացի այդ տեսակի նպաստից կը հարկաւորւի միանւագ նպաստ մօտ 10.000 ր[ուբլի] շորերի, տեղաշորերի, դեղերի և այլ անհրաժեշտ ծախքերի համար:

Աշխատաւոր ձեռքեր չունեցող ընտանիքներին հարկաւոր է օգնութիւն և պետք է օգնել անպայման ալիւրով և ոչ թե դրամով՝ ընդունելով ամեն մի անձի համար նորմա 30 ֆունտ *ալիւր մարդագլուխ ամսական, հաշւի չառնելով ծծկերներին և պետք է տալ 15 օրը մեկ անգամ 15-ական փութ:*

Անասուն ունեցողներին մինչև գործ գտնելը պետք է տալ անասունների կերակուր ևս: Գիւղերում դարմանը շատ չնչին գին ունի և կարելի է բաւականանալ դարմանով. ոչ մի դեպքում չպետք է թոյլ տալ ծախելու անասունները, որովհետև գնողները օգտւում են դրութիւնից և տալիս են չափազանց աննշան գին, այսպես, օրինակ՝ կովին՝ 5 ր[ուբլի], ե-

---

[18] *Կորպուսի հրամանատար:*

[19] *Պահնորդ:*

զանը 7–8 ր[ուբլի], մինչդեռ անասուններով կարող են նոքա աշխատել, եթե սայլեր էլ ունենան:

Որովհետև վերմակների մեծ կարիք կայ, *իսկ այդտեղ վերմակներ բամբակի հազիւ է կարելի լինում գնել 3 ր[ուբլի] 50 կ[ոպեկով] – 4 ր[ուբլով], մինչդեռ այն կողմերը բուրդը կարելի է գնել փութը 6 ր[ուբլով]. հետևապես կարելի է բաւականանալ առ այժմ գնածներով, իսկ մնացածները լրացնել հետևեալ կերպով՝ գնել բուրդ և քաթան, տալ իրենց* փախստական կանանց կարելու *իրենց համար վերմակներ և գործելու գուլպաներ, այդպիսով կարելի կը լինի տալ փախստականներին թե՛ աւելի տաք, և թե՛ աւելի ձեռնտու գնով վերմակներ:*

Անպատակայարմար են և միանգամայն անբարոյականացուցիչ դեր կարող են խաղալ պիտատելնի պունկտերը[20] *և թեյարանները, որովհետև կսովորեցնեն ժողովրդին ծուլութիւն և դժւար կլինի նոցա աշխատանքի դնելու, հետևապես հարկաւոր է աշխատաւորների համար գործ, իսկ աշխատանքի անընդունակների համար ալիւր և տաք շորեր, գլխաւորապես վերմակներ:*

Վերջացնելով զեկուցումս՝ պատիւ ունեմ յատնելու մեծարգոյ Խորհրդիդ, որ նպաստ արդեն տրւում է ծայրահեղ կարիքաւորներին վերոյիշեալ նորմայով, *բացի այդ Տաճկական Ղարաքիլիսայում տեսնուեցի նաչայլնիկ ուչաստկայի*[21] *հետ (նոր նուաճւած երկրների) և պահանջեցի, որ տայ գաղթականներին տաճիկների թողած ցորենից,* որովհետև փախստականները թողել են մեծ քանակութեամբ ցորեն, գարի և այլ մթերքներ, որոնցով օգտւում են տաճիկները և քրդերը, նա համաձայնեց առ այժմ բաց թողնել 50 փութ ցորեն, *իսկ յետագայի համար խնդրեց դիմել նոր նշանակւած նահանգապետի օգնական պոլկովնիկ*[22] Григолия *-ին. վերջինի հետ տեսնուեցի Սարիղամիշում, որի առաջ դրեցի նոյն պահանջը,* որը խոստացաւ կատարել: *Պետք է այդ բանի մասին ստանալ այստեղի բարձր իշխանութեան կարգադրութիւնը:*

Բացի այդ, Ղարաքիլիսա գիւղի մօտերքը գտնւում են քրդական փոքրիկ Արփաչայ, Մաղարաջուղ [Մաղարաջիկ], Ղարափուղար և այլն մի քանի գիւղեր, որտեղից քրդերը փախել են, թողնելով ցորեն և դատարկ տներ, պետք է միջնորդել այստեղի բարձր իշխանության առաջ, որպեսզի թոյլ տայ փախստականներին բնակւելու այդ գիւղերը, բայց անպայման բաժանելով ինքնապաշտպանութեան համար զենքեր, որովհետև շատ յաճախ քրդերը հարձակումներ են գործում և անզեն ժողովուրդը կարող է մեծ զոհեր տալ: Անհրաժեշտ է մանաւանդ բնակեցնել Ղարափուղար գիւղում, որտեղ կայ երկու ջրաղաց, աչքի առաջ ունենալով, որ ցորեն գտնւում է, իսկ ալիւրը շատ դժվարութեամբ է ձեռք բերւում, հետևապես պարզ կլինի Ղարափուղարի նշանակութիւնը, որտեղ 2 լաւ ջրաղացներ կան: Անպայման բնակեցնելու իրաւունք ստանալու դեպքում հարկաւոր է բնակւողներին

---

[20] *Սննդատու կայան:*

[21] *Տեղամասի կառավարիչ:*

[22] *Գնդապետ:*

զինել ինքնապաշտպանութեան համար, հակառակ դեպքում ոչ ոք չի համաձայնի բնակուել և միտք էլ չունի, որովհետև բոլորն էլ կարող են զոհ գնալ քրդական հարձակման, զենք չունենալու պատճառով:

Բացի այդ, Բաշ գիւղի մարմինը խոստացաւ ցորենի ժողովարարութիւն անել գիւղացիներից հոգալու առժամանակ փախստականների կարիքը ալիւրի տեսակետից, մանաւանդ, որ ժողովուրդը [դժգոհութիւն] չէր ցոյց տալիս այդ բանում և կարելի էր հաւաքել 200–250 փութ ցորեն:

Գիւղացիները բոլորը համաձայնել են առանց վարձի տալ փախստականներին բնակարաններ, *և բոլոր փախստականները և տեղաւորուելու են գիւղացիների բնակարաններում* առանց մի կոպեկ *վարձի: Որովհետև զանազան քաղաքներում կազմուել են զանազան մարմիններ փախստականներին նպաստելու համար, ուստի անհրաժեշտ է յարաբերութեան մէջ մտնել այդ մարմինների հետ և գործը կենտրոնացնել, հակառակ դեպքում գործը կը կաղայ և ժողովուրդը գիտնալով, որ ամեն կողմից իրենց մասին մտածում են, կծուլանայ և կը սովորի ձրիակերութեան: Այդ տեսակ մարմին կազմուել է Մոսկւայում, որտեղի ներկայացուցիչը ինձ խնդրեց զեկու[ցու]մ ուղարկել այդ մարմին: Զեկուցումը չեմ ուղարկել առայժմս մինչև Խորհրդիդ այդ մասին կարծիքս ներկայացնելը:*

Պետք է ի նկատի ունենալ, որ փախստականների թիւը օր օրի վերայ աւելանում է և շատ շուտով կարող է անցնել 10.000-ից:

Աղէքսանդր Շարաֆեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 112, թ. 48–51: Բնագիր: Ձեռագիր: